Պետրոս Դուրյան

Լճակ

Ինչու՞ ապշած ես, Լճակ,
Ու չեն խայտար քու այլակը
Միթե հայլվուդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ:

Եվ կամ միթե կըզմայլի՞ն
Ալյակքդ երկնի կապույտին,
Եվ այն ամպոց լուսափթիթ,
Որք նըմանին փրփուրքիդ:

Մելամաղձոտ լճակդ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավվիլ, լըռել ու խոկալ:

Որքան ունիս դու ալի
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բյուր:

Այլ եթե գոգդ ալ թափին
Բույլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չես կրնար դուն

Հոգվույս՝ որ է բոց անհուն:

Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չեն թոռմիր,
Ամպերը չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ եք դու և օդ,

Լճակ, դու ես թագուհիս,
Ջի թիովե մալ խորշոմիս,
Դարձյալ խորքիդ մեջ խլռով
Ջիս կը պահես դողդղալով:

Շատերը զիս մերժեցին,
«Քնար մունի սոսկ - ըսին.
Մին՝ «դողդոջ է, գույն չունի-»
Մյուսն ալ ըսավ - «Կը մեռնի»:

Ոչ ոք ըսավ - «Հե՛գ տղա,
Արդյոք ինչո՞ւ կը մըխա,
Թերևս ըլլա գեղանի,
Թե որ սիրեմ չը մեռնի»:

Ոչ ոք ըսավ - «Սա տըղին
Պատռենք սիրտը տըրտմագին,
Նայինք ինչե՛ր գրված կան...»
- Հոն հրդեհ կա, ոչ մատյան:

Հոն կա մոխի՛ր... հիշատա՛կ...
Ալյակքդ հուզին թող, լճակ,
Ջի քու խորքիդ մեջ անձկավ
Հուսահատ մը նայեցավ...

1871"